

---

## ԲՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

### ԴԱՎՈՒԴ ՔԻՅԱՆԻ

#### **Բնական (ոչ սոցիալական ծագման) գործոնները և քաղաքական գործընթացները**

Քաղաքական գործընթացները և պետությունների արտաքին քաղաքական վարքը պայմանավորում են տարբեր գործոններ, որոնք դասակարգվում են տարբեր ձևով: Տարբերակվում են քաղաքական գործընթացների վրա ազդող ներքին ու արտաքին, հոգևոր ու նյութական, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ: Սակայն կարելի է տրամաբանական տեսակետից ավելի հստակ դասակարգում առաջադրել՝ միմյանցից տարբերակելով սոցիալական ու բնական ծագման գործոնները: Նման տարբերակումը հաղթահարում է ոչ միայն նախորդ դասակարգումների «անհարթությունները» այն առումով, որ միևնույն գործոնը հաճախ հայտնվում է տարբեր խմբերում, այլև առաջին պլան է մղում թվարկված դասակարգումների տեսակետից ստվերում մնացող, բայց տեսականորեն կարևոր մեխանիզմների մասին այն հարցը, թե ինչպես են բնական ծագման գործոնները ներազդում քաղաքական ու սոցիալական գործընթացների վրա, յուրօրինակ կերպավորված «դառնում» սոցիալական, քաղաքական գործոններ:

Բնական գործոններից (դրանց թվին են դասվում բնակլիմայական պայմանները, բնական ռեսուրսները, աշխարհագրական դիրքը) ամենից շուտ ուշադրության են արժանացել բնակլիմայական պայմանները: Վաղուց է նկատված, որ առաջին քաղաքակրթությունները ձևավորվել են բնակլիմայական տեսակետից ամենից բարենպաստ շրջաններում, հատկապես բարեբեր գետահովիտներում: Սակայն տեսական անդրադարձի տեսակետից թերևս ամենից շատ ուշադրություն է գրավել բնական այն գործոնը, որը տեսաբանները կնքել են «աշխարհագրական դիրք» անունով: Թե ինչ նշանակություն ունի աշխարհագրական դիրքը ժողովուրդների ու պետությունների ճակատագրում, այսինքն՝ թե այն ինչ ազդեցություն է գործում պետությունների զարգացման ու հզորության վրա, երևում է խնդրին նվիրված տեսական ուսումնասիրությունների առատությունից և այն բանից, որ այդ մեծ թեման գիտական գրականության մեջ ամրագրվեց *աշխարհագրական դետերմինիզմ, գեոպոլիտիկա, գեոստրատեգիա* և այլ եզրույթներով: Սոցիալական սկսած՝ հասարակական գիտություններում հստակորեն գիտակցվեց, որ աշխարհագրական դետերմինիզմը՝ որպես սոցիալ-փիլիսոփայական հայեցակարգ, կոչված է տեսականորեն իմաստավորելու աշխարհագրական միջավայրի և հասարակական զարգացումների ներքին կապը: Բայց բնական և սոցիալական ծագման գործոնների կապի համատեքստում հասարակական կյանքի տարաբնույթ

ուլորտներից քաղաքական ուլորտի առանձնացումը կապված է Ֆրիդրիխ Ռատցելի (1844-1904) անվան հետ, որը տասնիններորդ և քսաներորդ դարերի սահմանագլխին լույս տեսած իր «Քաղաքական աշխարհագրություն» վերտառությամբ աշխատությամբ դարձավ գեոպոլիտիկայի հիմնադիր ու դասական: Նույն թեմային էր նվիրված 1900 թ. լույս տեսած «Ծովը՝ ժողովուրդների հզորության աղբյուր» աշխատությունը: Գաղափարը նույնն էր՝ բացահայտել երկրի աշխարհագրական դիրքի ազդեցությունը սոցիալական ու քաղաքական գործընթացների վրա: Այդ և դրան նախորդած ու հաջորդած գործերով Ռատցելը սկզբնավորեց քաղաքագիտական հետազոտությունների մի ողջ ուղղություն, որում բացահայտվում են պետության՝ որպես քաղաքական հաստատության, և աշխարհագրական գործոնների միջև խորքային կապերը: Նրա ժամանակակից Ալֆրեդ Մեհենը (1840-1914) «Պատմության վրա ծովային ուժի ազդեցության մասին. 1660-1783» աշխատության մեջ պետությունների տնտեսական հզորությունը, միջազգային համակարգում նրանց գրաված տեղը պայմանավորող գործոնների մեջ առանձնացրեց ծովային գործոնը: Ինչպես հայտնի է, աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում այդ թեմայի նոր տեսանկյուններ բացահայտեց Յելֆորդ Մակկինդերը (1861-1947): Նրա «Պատմության աշխարհագրական առանցքը» աշխատությունը վերաբերում էր ծովային ու ցամաքային երկրների ռազմավարական ներուժի համեմատությանը: Սակայն եթե նույնիսկ քաղաքական տեսությունները չանդրադառնային հասարակական զարգացման վրա «դրսից ներագրող» այդ գործոններին, ապա, միևնույն է, ռեալ քաղաքականությունը չէր կարող անտարբեր մնալ դրանց նկատմամբ: Շրջակա միջավայրի պահպանության ու էկոլոգիական գլոբալ անվտանգության համար թափ առած հասարակական ու քաղաքական շարժումները դրա ապացույցն են: Քսաներորդ դարում, հատկապես նրա երկրորդ կեսին, բնական ռեսուրսների թեման այնպես է միահյուսվել խոշոր տերությունների՝ առաջին հայացքից զուտ քաղաքական մտադրություններին ու պրակտիկ գործունեությանը, որ հաճախ դժվար է լինում դրանք տարանջատել միմյանցից:

### **Ռեսուրսային դետերմինիզմի երևույթը և նավթը**

Բնական ծագման գործոնների մեջ կարևորագույնը էներգառեսուրսներն են և առաջին հերթին՝ նավթն ու գազը, որոնք ընկած են ցանկացած երկրի տնտեսության հիմքում, և պատահական չէ, որ դրանք ճանաչված են որպես էներգիայի «ամենաքաղաքականացված տեսակներ»: Էներգիայի վերականգնվող աղբյուրները, ինչպես նաև միջուկային էներգիան, առայժմ չեն կարող այդ իմաստով համեմատվել նավթի հետ, քանի որ դեռևս չեն կարող ապահովել համաշխարհային տնտեսության կարիքները:

Էներգակիրների և առաջին հերթին նավթի ներքաշվածությունը գլոբալ քաղաքական գործընթացներ բացատրվում է նրանով, որ այդ հումքի մեծ պահանջարկ ունեցող պետությունները հենց աշխարհի հզոր տերություններն են, որոնց տրամադրության տակ են տեխնոլոգիական և ֆինանսական հսկայական միջոցներ, և որոնք միջազգային քաղաքական գործընթացների գլխավոր դերակատարներն են: Այդ ռեսուրսին տիրելու համար

նրանց մրցակցության պատճառով նավթ արդյունահանող երկրները հաճախ դառնում են միջազգային զինված բախումների թատերաբեմ: Վերջին տասնամյակների պատմական նշանակության մի շարք իրադարձություններ՝ ութամյա Իրան-իրաքյան պատերազմը, «Տանկերային պատերազմը» Պարսից ծոցում, «Անապատի փոթորիկը», Իրաքի ներխուժումը Քուվեյթ, Միացյալ Նահանգների գրոհը Աֆղանստանի վրա, ԱՄՆ վերջին ներխուժումը Իրաք, տեղի են ունեցել նավթի հանույթի ամենագլխավոր վայրերում կամ դրանց մատույցներում: «Նավթային քաղաքականության» մեջ, այսպիսով, ներգրավված են թե՛ նավթ սպառող, թե՛ նավթ արտահանող պետությունները, որոնց թվում և նավթային հսկայական պաշարներ ունեցող Պարսից ծոցի ավազանի երկրները, ի թիվս որոնց՝ նաև Իրանը:

Դանիել Յերջինը, որ հասարակության մեջ նավթի գործոնի դերի բարձրացումը բնութագրելու համար ներմուծել է «ածխաջրածնային մարդու դար» հասկացությունը, մատնանշում է երեք հիմնական հանգամանք, որոնք հասկանալի են դարձնում նավթի բացառիկ դերակատարությունը ժամանակակից աշխարհում: Առաջին՝ նավթը դարձել է միջազգային առևտրի ամենագլխավոր ապրանքը: Երկրորդ՝ նավթը որպես ապրանք միահյուսված է ազգային ռազմավարության և համաշխարհային քաղաքականության հետ: Եվ երրորդ՝ նավթը, քսաներորդ դարի առաջին տասնամյակներից սկսած, վերափոխում է արտադրության ու ընդհանրապես տնտեսության մյուս ճյուղերը<sup>1</sup>: Պարզվեց, որ նավթը երկակի բնույթի ռեսուրս է. այն ոչ միայն ազգային անվտանգության երաշխիք է, այլև արտաքին լուրջ վտանգների աղբյուր: Նրա դերը այնքան նշանակալից է XX դարի Իրանի քաղաքական պատմության մեջ, որ վստահորեն կարելի է ասել՝ այդ պատմության բոլոր կարևոր շրջադարձերում «նավթային թեման» եղել է առանցքայինը: Նավթի՝ ռազմավարական բնույթի «քաղաքական ապրանք» լինելու գիտակցման համար կրիտիկական կետ էր Երկրորդ համաշխարհային պատերազմը, որի ընթացքը և արդյունքները դաշնակից պետությունների քաղաքական գործիչներին բերեցին այն համոզման, որ իրենք հաղթել են՝ «լողալով նավթի ծովի վրայով, երբ մի կաթիլ նավթն արժեք մի կաթիլ արյուն»<sup>2</sup>:

Նավթի պահանջարկը արդյունաբերապես զարգացած երկրների արտաքին քաղաքականության ուղղորդիչներից է, ինչով և պայմանավորված է այն, որ նրանք, հատկապես խոշոր արդյունաբերական երկրները, իրենց արտաքին քաղաքականության մեջ հաշվի են առնում Մերձավոր Արևելքի և Պարսկական ծոցի նավթը՝ որպես մի գործոն, որից կախված է իրենց տնտեսական կյանքը<sup>3</sup>: Դա նրանց ընդհանուր անվտանգության խնդիրն է շոշափում, քանի որ նավթի արտադրության քանակի և զնի որևէ տատանում իր ազեցությունն է թողնում բոլոր երկրների վրա: Իրադարձությունների խորքում, ինչպես 1977 թվականին մատնանշել է Յենրի Քիսինջերը,

<sup>1</sup> Տե՛ս **Yergin D.** The Prize: The Epic Quest for Oil, Money, and Power. New York: Simon & Schuster, 1991, էջ 7:

<sup>2</sup> **Rohani F.** The History of Oil Nationalization of Iran, Tehran: Books Company, 1973, p. 75.

<sup>3</sup> Տե՛ս **Bariston R. P.** Modern Diplomacy, New York: Longman, INC, 1991, էջ 128:

ընկած էր այն, որ Միացյալ Նահանգներն իրենց պատմության մեջ առաջին անգամ հայտնվել են մի այնպիսի կացության մեջ, երբ պետությունների մի փոքրիկ խումբ կարող էր ճնշում գործադրել Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական որոշումների կայացման վրա, որոնք չեն բխում ԱՄՆ պետական շահերից<sup>4</sup>: Պատահական չէր, որ Յենրի Քիսինջերի խորհրդով Միացյալ Նահանգներում հիմնադրվեց էներգետիկայի հարցերով վարչություն, որը զբաղվում էր նավթի այլընտրանքի փնտրտուքով<sup>5</sup>:

Ասվածը թույլ է տալիս պնդելու, որ *աշխարհագրական դետերմինիզմի* համանմանությամբ կարելի է մուծել **ռեսուրսային դետերմինիզմ** հասկացությունը: Հիմնախնդրի ընդհանուր համատեքստում նման տեսանկյուն առանձնացնելը կարող է խոստումնալից լինել, քանի որ, ի տարբերություն աշխարհագրական գործոնի, որը կարևորվում է աշխարհագրական դետերմինիզմի մասին հայեցակարգում, ռեսուրսային գործոնը, ինչպես ցույց են տալիս արդեն կատարված հետազոտությունները, ավելի հեշտ է չափել:

### **Ռեսուրսային դետերմինիզմի թեման ռանտյե պետության մասին տեսության մեջ**

Այս տեսությունը ուսումնասիրում է նավթ արդյունահանող պետությունների ներքին ու արտաքին քաղաքականության հարցերը՝ պայմանավորված նավթային գործոնով: 1970 թվականից սկսած՝ քաղաքագիտական ոլորտում այս տեսության հանդեպ հետաքրքրությունը նոր թափ ստացավ: Առաջին անգամ այս հասկացությունը ձևակերպել է Հուսեյն Մահդավին նախահեղափոխական Իրանի վերաբերյալ, երբ 1970 թվականին, որպես Միջին Արևելքի մասնագետ, բանավիճել էր արաբական աշխարհի տեսաբանների հետ: Մահդավիի կարծիքով, պետությունը կարելի է բնութագրել որպես ռանտյե պետություն այն դեպքում, երբ նավթային գործոնի ազդեցությունը բավականին շոշափելի է, իսկ տնտեսության մնացած հատվածը մղված է երկրորդ պլան<sup>6</sup>:

Խնդրին անդրադարձել է նաև Հագեն Բաբլավին<sup>7</sup>: Նա հասկացությունները սահմանեց խնդրի տեսակետից կարևոր այն կոնկրետ պրոբլեմների վերլուծությունների և այն պետությունների օրինակի հիման վրա, որոնց եկամուտների հիմնական մասը գոյանում էր արտաքին աղբյուրներից:

Բաբլավին առաջ քաշեց ռանտյե պետության չորս հիմնական հատկանիշներ: Պետությունը ռանտյե պետություն է,

- եթե գերակշռում են վարձակալված տարածքները,

---

<sup>4</sup> Տե՛ս **Asadian A.** The Security Policy of US in Persian Gulf. Tehran: Pejoheshkade Motaleat Rahbordi, 2002, էջ 58:

<sup>5</sup> Տե՛ս **Fateh M.** 50 Years the Iran's Oil. Tehran: Payam Press, 1979, էջ 2-18:

<sup>6</sup> Տե՛ս **Mahdavy H.** The Patterns and Problems of Economic Development in Rentier States: The Case of Iran, Studies in Economic History of the Middle East, London: Oxford University Press, 1970:

<sup>7</sup> Տե՛ս **Beblawi H.** The Rentier State in the Arab World, in Luciani, The Arab State, London: Routledge, 1990, էջ 32:

- եթե տնտեսությունը առավելապես հենված է արտաքին աղբյուրներից հոսող եկամուտների վրա և այդ իսկ պատճառով կարիք չունի հայրենական հզոր արդյունաբերության,

- եթե երկրի աշխատավորների միայն մի փոքր հատվածն է ակտիվորեն ներգրավված վարձակալական հիմունքներով ստեղծված արտադրության մեջ,

- եթե երկրի կառավարությունը ֆինանսավորվում է արտաքին աղբյուրներից:

Թվարկված հատկանիշները ցույց են տալիս, թե սոցիալ-տնտեսական ինչպիսի հետևանքներ է հարուցում նավթային գործոնը, եթե երկրի տնտեսությունը բազմազանեցված չէ, եթե այն հիմնված է մեկ ապրանքի վրա: Սակայն հետևանքները չեն սահմանափակվում սոսկ տնտեսական ու սոցիալական բնույթի հարցերով: Դրանք անխուսափելիորեն պետք է հարուցեն և հարուցում են նաև քաղաքական բնույթի հետևանքներ:

Համաձայն այս տեսության՝ այն պետությունները, որոնց եկամուտները կախված են արտաքին աղբյուրներից, շատ քիչ կարիք ունեն հարմարվելու իրենց երկրների ժողովուրդներին՝ երկրում ծավալվող քաղաքական զարգացումների դաշտում: Սա ռանտյե պետություն լինելու իրողությունից բխող քաղաքական բնույթի թերևս ամենակարևոր հետևանքներից մեկն է: Նման պետությունների կառավարությունները իրական շարժառիթներ չեն ունենում իրենց ժողովրդի հետ կառուցողական քաղաքական երկխոսության մեջ մտնելու, երկրի բնակչությանը օրինական հարկային դաշտ բերելու համար: Բոլոր հարցերը «հարթվում են» օտար աղբյուրներից հոսող միջոցների հաշվին:

Ռանտյե պետության մասին տեսությունը պնդում է, որ պետությունը հայտնվում է ճգնաժամի առաջ այն ժամանակ, երբ հասանելի ռեսուրսները չեն բավարարում նախկինում կառավարությանը աջակցող բոլոր խմբերին հանգստացնելու համար:

Նոր նավթային պետությունների հայտնվելը և համաշխարհային առևտրի մեջ նրանց անընդհատ աճող կարևորությունը 1970 թվականին քաղաքագների շրջանում մեծ հետաքրքրություն առաջացրին ռանտյե տնտեսական համակարգերի հանդեպ: Ռանտյե պետությունների շարքում էին Միջին Արևելքի նավթային տերությունները՝ ներառյալ Սաուդյան Արաբիան, Արաբական էմիրությունները, Իրաքը, Իրանը, Քուվեյթը և Կատարը, ինչպես նաև Վենեսուելան, Լիվիան, Լատինական Ամերիկան և Հարավային Աֆրիկան, որոնք բոլորն էլ ՆԱՊԿ անդամներ էին և ունեին խոշոր եկամուտներ նավթային աղբյուրներից: Ռանտյե պետության մասին տեսությունը բացատրական ներուժ ունի Իրանի արտաքին (և նաև ներքին) քաղաքականության ընթացման համար: Նավթային ռենտան ավտորիտար պետության շարունակականությանը սատարող գործոն է: Նավթային դիվանագիտությունը Իրանի նավթային քաղաքականության զլխավոր հենարաններից մեկն է: Ռանտյե պետության մասին տեսությունը նաև բացատրական ներուժ ունի հասկանալու համար Իրանի և հարևան պետությունների միջև առկա ներտարածաշրջանային հարաբերությունները: Ի հաստատումն այս տեսակետի՝ կարելի է մատնանշել այն, թե ինչ քննություն բռնեց այդ տեսությունը Իրանի արտաքին քաղաքականության մեջ 1979-1999 թվականներին: Ամեն

մի ռանտյե պետություն մի կողմից ունի որոշակի առավելություններ, իսկ մյուս կողմից՝ հենց ռանտյե պետություն լինելու հանգամանքով պայմանավորված՝ նաև խնդիրներ ու խոցելի կողմեր: Ռանտյե պետությունների ռեսուրսային հարստությունները յուրօրինակ մարտահրավերներ են նրանցում քաղաքացիական հասարակությունների ու ժողովրդավարության ձևավորման համար: Բերլավին գտնում է, որ ռանտյե պետությունների բնույթը մասնավորապես բացատրում է նրանցում ավտորիտար ռեժիմների առկայությունը՝ պայմանավորված բնական ռեսուրսների նման առատությամբ<sup>8</sup>: Այլ կերպ ասած՝ բնական ռեսուրսներն ուղղակի հարուցում են քաղաքական երևույթներ: Չենց այդ իրողությունն է մեզ համար հիմք հադիսանում առաջադրելու տեսական այն դրույթը, որ բնական ծագման գործոնը, տվյալ դեպքում նավթը, կարող է պայմանավորել երկրի քաղաքական պատմության նոր փուլ:

Ռանտյե պետության մասին տեսությունը սույն հետազոտության մեջ սկզբունքային նշանակություն է ձեռք բերում քաղաքական գործընթացների վրա ներազդող, դրանք պայմանավորող գործոնների՝ մեր կողմից նոր դասակարգման դիտակետից: Վերը մենք *ներքին* ու *արտաքին*, *նյութական* ու *հոգևոր*, *օբյեկտիվ* և *սուբյեկտիվ* գործոնների շարքում առաջարկեցինք առանձնացնել և միմյանցից տարբերակել նաև *բնական* և *սոցիալական* ծագման գործոնները: Նոր դասակարգում առաջարկելու համար հիմք է հանդիսացել այն իրողությունը, որ դասակարգման նախորդ եղանակը չի ներկայացնում «գործոնային դաշտի» բազմազանությունը՝ գործոնների բովանդակության, գործառույթների տեսակետից: Առանձնացված գործոնները համարժեք ձևով չեն արտացոլում քաղաքական զարգացումների «ներքին հարստությունը»՝ դրանց շարժառիթների ու ազդակների առումով: Բնական և սոցիալական բնույթի գործոնների համադրումը, դրանք փոխկապակցված ձևով քաղաքական գործոնների դաշտ մտցնելը առաջին հայացքից կարող է անհամոզիչ ու անբնական թվալ: Բայց դա միայն առաջին հայացքից: Ավելի ուշադիր քննությունը ցույց է տալիս, թե որքան խորն է այն կապը, որ որոշակի պայմաններում կարող է հայտնվել այդ տարաբնույթ գործոնների միջև: Անմիջական հայացքից թաքնվող այդ կապը նավթային գործոնի պարագայում ի հայտ է բերում հենց ռանտյե պետության մասին տեսությունը:

Ռանտյե պետության գոյության փաստը ակնառու կերպով ցույց է տալիս, թե ինչպես է բնական գործոնը անմիջականորեն, կարելի է ասել՝ կարճ միացումով, հարուցում սոցիալական գործողություններ ու երևույթներ, և դրանց պատճառով՝ նաև քաղաքական հետևանքներ: Եթե ռանտյե պետությունները «կախված են մնում» մեկ ապրանքից և չեն կարողանում ապահովել իրենց տնտեսությունների բազմազանեցման բախտորոշ բնույթ ընդունող խնդիրը, ապա դառնում են սոցիալական ու քաղաքական առանձնահատուկ բնութագրություններ ունեցող երկրներ, որոնց թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքական նկարագիրը էականորեն տարբերվում է այլ երկրներից: Դրանցում, ինչպես նշվեց, տնտեսական ու քաղաքական բոլոր ներքին հար-

---

<sup>8</sup> Տե՛ս **Beblawi H.** The Rentier State in the Arab World, in Luciani, The Arab State, London: Routledge, 1990, էջ 33:

ցերը (արտաքին քաղաքականության մասին ավելորդ է նշել՝ հարցի ակնհայտության պատճառով) լուծվում են նավթային եկամուտների հաշվին ու դրանց օգնությամբ: Երկիրը դուրս է մնում բնականոն զարգացման հունից: Այն կորցնում է քաղաքացիական, ժողովրդավարական երկիր դառնալու «բնական ուղին»: Արդեն իսկ այդքանը բավարար է, որպեսզի հիմնավորված համարվի բնական և սոցիալական ծագման գործոնների՝ որպես քաղաքական գործընթացները «իրենց ծագման տեսակետից» բնութագրող կատեգորիաների, առանձնացումը: Ռանտյե պետության մասին տեսությունը գալիս է հաստատելու, թե ինչպես է «մաքուր բնական» այդ գործոնը ծնում սոցիալական երևույթներ, դառնում «ամենաքաղաքականացված ապրանքը» և հարուցում ներքին ու արտաքին քաղաքական գործընթացներ:

Նավթը Իրանի պատմության մեջ հարուցել է քաղաքական բնույթի այնպիսի գործընթացներ, որոնք որակապես տարբերվում են պատմության նախընթաց երևույթներից: Դրանք իրենց ամբողջության մեջ պայմանավորել են տնտեսական, սոցիալական ու քաղաքական այնպիսի երևույթներ, որոնք երկրին տալիս են ոչ միայն իր պատմության նախորդ փուլերից տարբեր որակական նոր բնութագրեր, այլև մյուս երկրներից տարբեր սոցիալ-տնտեսական ու քաղաքական կարգավիճակ: Ռանտյե պետության մասին հասկացությունը կոչված է տեսականորեն ամրագրելու հենց այդ կարգավիճակը:

Բերլավին ռանտյե պետությունների մի շարք այլ բնութագրեր է ճշգրտում՝ դրանք դիտարկելով նավթային ռանտյե պետության մասին գաղափարների համատեքստում: Օրինակ, այն պայմաններում, երբ կառավարությունը հիմնական գործատուն է, բյուրոկրատիան անհարկի ուռճացվում, անարդյունավետ է դառնում և վերածվում է հասարակության «ռանտյե դասակարգի» մասն մի բանի: Դա նավթի՝ որպես բնական գործոնի, սոցիալական ու քաղաքական գործընթացներ ծնելու ներուճակության մեկ այլ ակնհայտ դրսևորում է: Նման երկրներում տեղական օրենքները սովորաբար խոչընդոտում և հաճախ անհնարին են դարձնում արտաքին ընկերությունների օպերատիվ գործունեությունը: Որպեսզի տնտեսական գործունեություն ծավալվի, արտաքին ձեռներեցները վարձում կան կապի մեջ են մտնում տեղական «հովանավորների» հետ (ալ-քաֆիլ), որոնք արտոնում են արտաքին ընկերություններին գործունեություն ծավալել իրենց անունից՝ դրա դիմաց նրանց տալով համապատասխան վարձ: Բայց չէ՞ որ դա ռենտայի մեկ այլ տեսակ է: Կարելի է հավելել, որ նավթային ռենտան ծնում է ածանցյալ, երկրորդ կարգի ռենտաներ, որոնք հարվածում են առևտրին և իրապես հանգեցնում են ունեցվածքային սպեկուլյացիայի: Իսկ դա արդեն ցույց է տալիս, թե ինչպես կարող է նավթը որպես բնական գործոն լինել ոչ միայն առանձին սոցիալական կամ քաղաքական երևույթի, այլև գործընթացների մի ամբողջ շղթայական ռեակցիայի հարուցիչ կամ պատճառ:

Ռանտյե պետության մասին տեսությունը կապահպանի Իրանի արտաքին (և, իհարկե, ներքին) քաղաքականության շարժառիթների և միտումների բացատրության իր ներուժը այնքան ժամանակ, քանի դեռ Իրանի արտաքին ե-

Կամուտների առյուծի բաժինը կտրամադրի նավթը, և քանի դեռ նավթը կլինի այդ քաղաքականությունը պայմանավորող ամենահզոր գործոնը:

**ДАВУД КИЯНИ – *Природные факторы в контексте политических процессов.*** – Каким образом природные факторы влияют на политические процессы? Эта тема принадлежит к числу самых актуальных в политологии. Она традиционно рассматривалась в рамках концепции географического детерминизма. Однако не менее энергично природные ресурсы воздействуют и на политические процессы. Их воздействие столь значительно, что даёт основания очертить круг связанных с ними вопросов и систематизировать эти вопросы с точки зрения ресурсного детерминизма. В Иране и арабских странах широко распространена теория о государствах-рантье. Согласно ей влияние нефтяного фактора на политические процессы более очевидно, нежели географического фактора, и его легче измерить.

**DAVOOD QIYANI – *Natural factors within the framework of political practice.*** – One of the actual issues in political science is concerned with the impact of natural factors on the political procedures. Traditionally, the present issue was discussed within the framework of geographic determinism. However, the impact of natural resources of countries on the mentioned procedures is equally significant. The theory of *réntier* states, which enjoys popularity with Iran and Arabic countries, proves that the impact of the oil factor on the political process is more obvious and more susceptible to being measured than geographic factors.